

ՄԵԴԻԱԳՐԱԳՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գրագիտությունը՝ կարդալու և գրելու, իսկ մեդիագրագիտությունը մեդիայից ճիշտ օգտվելու, այն սպառելու և գրագետ մեդիաբովանդակությունն ստեղծելու կարողությունն է:



Մեդիան գրագետ սպառելու և մեդիաբովանդակությանը քննադատաբար վերլուծելու համար անհրաժեշտ է հիշել հետևյալ 5 առանցքային հարցերը.

- Ո՞վ է ուղերձի նյութի հեղինակը:
- Ի՞նչ ձևաչափ և ի՞նչ գործիքներ են կիրառվել իմ ուշադրությունը գրավելու համար:
- Ո՞րն է ուղերձի նպատակը:
- Ո՞վ է նյութի թիրախային լսարանը, ո՞ւմ համար է այն ստեղծված:
- Ինչպիսի՞ն է նյութի բովանդակությունը:



Մեդիագրագետ ես, երբ.

- Կասկածում ես բովանդակությանը չհամապատասխանող վերնագիր ու լուսանկար նկատելիս:
- Չես կարդում, չես տարածում նյութեր, որոնց հրապարակման ամսաթիվը, սկզբնաղբյուրը կամ աղբյուրը հայտնի չեն:
- Նկատում ես, որ կայքում չկան արժանահավատ տեղեկություններ նյութի խմբագրության/աղբյուրի ու հեղինակի մասին:




Կրթական այս նյութը ստեղծվել է «Մեծահասակների հզորացում մեդիագրագիտությամբ» ծրագրի շրջանակում, որն իրականացնում են Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը և Հանրային լրագրության ակումբը Գերմանիայի արտաքին գործերի նախարարության աջակցությամբ:



ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԶՈՐԱՅՈՒՄ ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

Եկե՛ք միասին լուծենք մեդիագրագիտության խաչբառը՝ ծանոթանալով մեդիաաշխարհի բառամթերքի մի մասին:



1. Հմտությունների ամբողջությունը, որը թույլ է տալիս ճիշտ սպառել մեդիան:
2. Ոչ միտումնավոր տարածած կեղծ լուր:
3. Նորություն:
4. Առցանց հարթակ, որտեղ տեղադրվում են հոդվածներ և լուրեր:
5. Հաղորդում է և՛ ձայն, և՛ պատկեր:
6. Տեղեկություն, հաղորդում որևէ բանի մասին:
7. ԶԼՄ-ների տարր, որն ուղղված է հասարակությանը նորություններ հաղորդելուն:
8. Համակարգչային ցանցերի փոխկապակցված համաշխարհային համակարգ:
9. Սուտ լուրն՝ այլ կերպ:
10. Լուր, տեղեկություն, որի իսկությունը հաստատված է փաստերով:

11. Նորության սկիզբը, որին կարելի է հասնել և ստուգել այն:
12. Վնասակար ծրագրեր, որոնք կարող են հայտնվել համակարգչում և դառնալ խոտան:
13. Տպագիր մեդիայի տեսակ:
14. Համացանցում՝ սոցիալական...:
15. Լուր, որը չի համապատասխանում իրականությանը:
16. Ավանդական մեդիայի միջոց:

17. Եթե լուրի բովանդակությունից հանվեն կարծիքները և հույզերը, կմնան չոր...:
18. Բառ կամ արտահայտություն, որին նախորդում է # նշանը:
19. Փոստադր կամ գովազդային նամակ, որը ստանում ենք էլեկտրոնային փոստին:
20. Կարծիքը, միտքը հանրայնացնելու միջոց սոցիալական ցանցերում:

